

07.11.2016

ԱՌԱՋԱՐԿ

Համակենտրոնացման հայտարարման պահանջների վերանայման և
Հայաստանի ներդրումային միջավայրի բարելավման վերաբերյալ

Ընդհանուր նկարագրություն.

Մույն առաջարկով նախ ներկայացվում են Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց փայաբաժնի (բաժնետնաս, բաժնետոմս) ձեռք բերման միջոցով ներդրում կատարելու համար «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված սահմանափակումների և հավելյալ վարչարարության պահանջները, որոնք բացասական հետևանք են ունենում Հայաստանի ներդրումային միջավայրի վրա:

Մասնավորապես, խոսքը վերաբերում է Օրենքով սահմանված համակենտրոնացմանը, որի հայտարարման պահանջը լուրջ խնդիրներ է առաջացնում Հայաստանում ներդրում կատարելիս և ստիպում է ներդրողներին լրացուցիչ վարչարարության ընթացակարգերով անցնել մինչ ներդրում կատարելը, որը կարող է տևել մինչև 90 օր և ավելի: Արդյունքում, ներդրողները ստիպված են հայտարարագրել իրենց գործարքը (համակենտրոնացումը)՝ մինչ ներդրում անելը ֆինանսական և այլ տեղեկություններ ներկայացնելու Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին (Հանձնաժողով) և միայն Հանձնաժողովի թույլտվությունը ստանալուց հետո իրականացնել ներդրումներ՝ ունեալով թե ժամանակի կորուստ, թե հսկայական լրացուցիչ աշխատանք կատարելու պարտավարություն, թե հնարավոր առևտրային գաղտնիք կազմող և Հայաստանի շուկայի հետ չկապված տեղեկություններ ներկայացնելու պահանջ: Նշվածը էականորեն խոչընդոտում է հնարավոր ներդրումները և ներդրումների կատարման գործընթացը դարձնում բավականին բարդ, երկարատև և նույնիսկ ոչ ցանկալի:

Համակենտրոնացման առնչությամբ ներկայիս օրենսդրական կարգավորումները.

Ստորև ներկայացվում են այն հիմնական կարգավորումները, որոնք հանգեցնում են վերը նկարագրված իրավիճակին:

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացում է համարվում՝*

4) տնտեսվարող սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտի փայաբաժնի ձեռքբերումը, եթե դա ինքնին կամ ձեռք բերողին արդեն պատկանող փայաբաժնի հետ միասին կազմում է այդ տնտեսվարող սուբյեկտի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի 20 տոկոսը կամ ավելին:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փայաբաժնի ձեռքբերման դեպքում համակենտրոնացման մասնակիցներ են փայաբաժնի ձեռք բերող տնտեսվարող սուբյեկտը և այն տնտեսվարող սուբյեկտը, որի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում փայաբաժնի է ձեռք բերվում, իսկ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ Մույն օրենքի իմաստով համակենտրոնացումը կայացվում է՝*

1) մինևնույն ապրանքային շուկայում գործող (մրցակից հանդիսացող) տնտեսվարող սուբյեկտների միջև (հորիզոնական համակենտրոնացում):

2) որոշակի փոխկապակցվածություն ունեցող տարբեր ապրանքային շուկաներում գործող (մրցակից չհանդիսացող՝ տվյալ ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքներ իրացնող ու ձեռք բերող) տնտեսվարող սուբյեկտների միջև (ուղղահայաց համակենտրոնացում):

3) տարբեր ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների միջև (խառը համակենտրոնացում):

Օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ *Տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումը, մինչև գործողության մեջ դնելը, ենթակա է հայտարարագրման, եթե՝*

1) *համակենտրոնացման մասնակիցների ակտիվների կամ հասույթի ընդհանուր արժեքը (չափը) կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների կամ հասույթի արժեքը (չափը) դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում գերազանցել է Հանձնաժողովի որոշմամբ սահմանված ակտիվների կամ հասույթ(ներ)ի արժեքը (չափը).*

2) *համակենտրոնացման մասնակիցներից առնվազն մեկը որևէ ապրանքային շուկայում ունի գերիշխող դիրք:*

Հանձնաժողովի 23.05.2011թ-ի թիվ 191-Ն որոշմամբ սահմանվել են ակտիվների կամ հասույթների հետևյալ արժեքները (չափերը)

1. *հորիզոնական համակենտրոնացման մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է հինգ հարյուր միլիոն դրամ կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների արժեքը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում՝ երեք հարյուր միլիոն դրամ.*

2. *հորիզոնական համակենտրոնացման մասնակիցների հասույթների ընդհանուր չափը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է մեկ միլիարդ դրամ կամ մասնակիցներից առնվազն մեկի հասույթի չափը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում՝ յոթ հարյուր միլիոն դրամ.*

3. *ուղղահայաց կամ խառը համակենտրոնացման մասնակիցների ակտիվների ընդհանուր արժեքը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է մեկ միլիարդ դրամ կամ մասնակիցներից առնվազն մեկի ակտիվների արժեքը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում՝ յոթ հարյուր միլիոն դրամ.*

4. *ուղղահայաց կամ խառը համակենտրոնացման մասնակիցների հասույթների ընդհանուր չափը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում կազմել է երեք միլիարդ դրամ կամ մասնակիցներից առնվազն մեկի հասույթի չափը դրա ստեղծմանը նախորդող վերջին ֆինանսական տարում՝ երկու միլիարդ դրամ:*

Օրենքի 10-րդ հոդվածը իր հերթին սահմանում է, որ *Արգելվում է հայտարարագրման*

ենթակա համակենտրոնացումը գործողության մեջ դնելը՝ մինչև Հանձնաժողովի կողմից որոշում կայացնելը, իսկ գործողության մեջ դրված արգելված համակենտրոնացումը ենթակա է լուծարման (լուծման, դադարեցման) օրենսդրությամբ սահմանված կարգով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-րդ մասով սահմանվում է *Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի իրականացման առավելագույն ժամկետը՝ 90 օր, որը կիրառվում է նաև համակենտրոնացման հայտարարագրման նկատմամբ:*

Բացի այդ, օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ *Սույն օրենքով նախատեսված դեպքում*

համակենտրոնացումը չհայտարարագրելու կամ արգելված համակենտրոնացումը գործողության մեջ դնելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է համակենտրոնացման մասնակից տնտեսվարող սուբյեկտի՝ համակենտրոնացմանը մասնակցելուն նախորդող տարվա հասույթի մինչև չորս տոկոս, բայց ոչ ավելի, քան հինգ հարյուր միլիոն դրամ: Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն մասով նախատեսված իրավախախտման համար նշանակվող տուգանքի չափը կազմում է համակենտրոնացման մասնակից տնտեսվարող սուբյեկտի՝ համակենտրոնացմանը մասնակցելուն նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա

գործունեության ժամանակահատվածի հասույթի մինչև չորս տոկոս և չի կարող գերազանցել հինգ հարյուր միլիոն դրամը:

Ավելին, Հանձնաժողովի 23.05.2011թ-ի թիվ 560-Ն պաշտոնական պարզաբանման համաձայն

համակենտրոնացման հայտարարգրման համար «ապրանքային շուկայում գործող» արտահայտությունը ներառում է Հայաստանի Հանրապետության տարածքում և դրա ապրանքային շուկայում գործունեություն չիրականացնող օտարերկրյա կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում և դրա ապրանքային շուկայում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտի կանոնադրական կապիտալում փայաբաժին ունենալը: Նշված պարզաբանման համաձայն փաստորեն համակենտրոնացման հայտարարգրման պահանջը տարածվում է նաև օտարերկրյա ներդրողների վրա, ովքեր հայկական ընկերության փայաբաժին ձեռք բերելու միջոցով ցանկանում են ներդրում կատարել Հայաստանում:

Համակենտրոնացման հայտարարգրման ներկայիս իրավիճակը և խնդիրները.

Ամփոփելով վերը նշված կարգավորումները, ստացվում է հետևյալ պատկերը՝

1. Սահմանած չափով Փայաբաժնի ձեռքբերումը համարվում է համակենտրոնացում,
2. Օտարերկրյա անձանց կողմից հայկական ընկերության փայաբաժնի ձեռքբերումը ևս ենթակա է հայտարարգրման,
3. Համակենտրոնացման հայտարարգրման համար բավական է ձեռք բերողի և ձեռք բերվող ընկերության՝ առանձին կամ միասին ակտիվների կամ հասույթի սահմանված չափը գերազանցելը,
4. Հայտարարգրման վարույթը տևում է մինչև 90 օր, իսկ մինչ Հանձնաժողովի թույլտվությունը արգելվում է համակենտրոնացումը դնել գործողության մեջ (ձեռք բերել փայաբաժինը):
5. Համակենտրոնացման չհայտարարգրումը կարող է հանգեցնել դրա դադարման (գործարքի լուծման) և օրենքով սահմանված պատասխանատվության կիրառման:

Նման ընդհանրական պայմանների սահմանումը այսօր հանգեցրել է մի իրավիճակի, երբ տնտեսվարող սուբյեկտները չեն ենթադրում, որ իրենց միջև կնքվող գործարքները ենթակա են հայտարարգրման և հարուցվում են բազմաթիվ վարչական վարույթների Հանձնաժողովի կողմից, որոնց ծանրակշիռ մեծամասնությունը սահմանափակվել են տնտեսավարող սուբյեկտներին նախազգուշացում տալով: Արդյունքում, պետական ռեսուրսները և Հանձնաժողովի ժամանակը ծախսվում է տնտեսավարողներին համակենտրոնացման հայտարարգրման պահանջի մասին իրազեկմամբ, քանի որ նախազգուշացման միջոցով պատասխանատվությունը պրակտիկորեն այլ խնդիր չի լուծում և որևէ ազդեցություն չի ունենում կնքված գործարքների և տնտեսական մրցակցության վրա: Նշված վարույթներով ուսումնասիրված գործերով նախազգուշացումների թիվը խոսում է այն մասին, որ այդ գործարքները իրական որևէ անբարենպաստ ազդեցություն չեն ունեցել տնտեսական մրցակցության վրա:

Որպես օրինակ՝ խոշոր (սահմանված չափը գերազանցող կապիտալով կամ ակտիվներով) օտարերկրյա կազմակերպության կամ խոշոր ակտիվներ (սահմանված չափը գերազանցող) ունեցող օրտարերկրացու կողմից Հայաստանի Հանրապետությունում գրանցված ցանկացած իրավաբանական

անձի փայաբաժնի ձեռք բերման դեպքում օտարերկրյա ներդրողը պետք է հայտարարգրի գործարքը (համակենտրոնացումը) անկախ ձեռք բերվող ակտիվների մեծությունից կամ տնտեսական մրցակցության վրա դրա ազդեցությունից:

Բացի այդ, պրակտիկորեն սահմանված չափով փայաբաժնի ձեռքբերման ցանկացած գործարք, որի ժամանակ ձեռք բերողը կամ կազմակերպությունը, որի փայաբաժինը գնվում է, տիրապետում է սահմանված չափից ավել ակտիվներ կամ հասույթ, տվյալ գործարքը ենթակա է լինելու հայտարարգրման և մինչև Հանձնաժողովի թույլտվությունը փայաբաժինը չի կարող փոխանցվել, իսկ փոխանցվելու դեպքում գործարքը կարող է լուծվել և հանգեցնել նաև տուգանքների նշանակման:

Գտնում ենք, որ համակենտրոնացման նման ընդհանրական պահանջը որևէ կերպ չի ապահովում Հանձնաժողովի և տնտեսական մրցակցության ՀՀ օրենսդրության նպատակների և սկզբունքների իրականացումը՝ լրացուցիչ անտրամաբանական վարչարարության պահանջ սահմանելով իրականում տնտեսական մրցակցության վրա որևէ էական ազդեցություն չունեցող գործարքները հայտարարգրելու վերաբերյալ:

Առաջին հերթին սա խանգարում է օտարերկրյա ներդրողներին, որոնք ի սկզբանե պարտավորություն են ունենում բացահայտել իրենց ֆինանսական և այլ տվյալները՝ ներկայացնելով իրենց գործունեության մասին հայտարարգրի Հանձնաժողովին (որոնք կարող են առևտրային գաղտնիք պարունակել), ինչպես նաև ստիպված են լինում սպասել Հանձնաժողովի երկարատև վարույթի իրականացմանը՝ փաստացի ներդրում կատարելու համար:

Սույն վերոնշյալ մեջ ներկայացվել է ընդամենը փայաբաժնի ձեռքբերման միջոցով համակենտրոնացման հայտարարգրման խիստ պահանջի կարգավորումները, սակայն նմանատիպ իրավիճակ է ստեղծվում նաև սահմանված չափերը գերազանցող ցանկացած այլ ակտիվների ձեռքբերման կամ օրենքով սահմանված համակենտրոնացման հայտարարգրման այլ տարբերակների դեպքում՝ որոնք ենթակա են հայտարարգրման անկախ տնտեսական մրցակցության վրա դրանց իրական ազդեցությունից:

Խնդիրների լուծման առաջարկ.

Որպես նշված խնդիրների լուծման տարբերակ՝ առաջարկում ենք.

1. Հստակեցնել համակենտրոնացման հայտարարգրման ենթակա դեպքերը և թիրախավորել իրականում տնտեսական մրցակցության վրա հնարավոր անբարենպաստ ազդեցություն ունեցող գործարքները,
2. Հնարավորինս բացառել օտարերկրյա ներդրողների կողմից Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ կամ տարբեր ապրանքային շուկաներում ներդրում կատարելու համար հայտարարգրման պահանջը: Օտարերկրյա ներդրողի մասնակցության դեպքում բացառել վերջինիս հասույթի և/կամ ակտիվների չափը որպես հայտարարգրման հիմք:
3. Սահմանել նախահայտարարգրման պարզ և արագ ընթացակարգ, որը հնարավորություն կտա բացահայտել տնտեսական մրցակցության վրա հնավառոր անբարենպաստ հետևանքների առևերույթ առկայության ռիսկը և հիմնական հայտարարգրումը պարտադրել բացառապես նման ռիսկային գործարքների համար:

4. Որպես նախահայտարարագրման այլընտանքային գործիք հնարավորություն տալ իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող պետական մարմնին կամ արժեթղթերի ռեեստր վարող կազմակերպություններին իրազեկել Հանձնաժողովին գրանցման ներկայացված գործարքների մասին և Հանձնաժողովին իրավունք տալ կասեցնել գրանցման գործընթացները ու պահանջել համակենտրոնացման հայտարարագրում, եթե ներկայացված գործարքները առևտրայթ կարող են տնտեսական մրցակցության համար անբարնպաստ հետևանքներ ունենալ: Ընդ որում, Հանձնաժողովին իրազեկման ենթակա գործարքները կարող են ավտոմատ կերպքով որոշվել հարկային ծառայության մոտ առկա հաշվապահական տվյալների հիման վրա՝ գործարքի կողմերի ակտիվների կամ հասույթի սահմանված չափերից ելնելով: